



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3290

Կ. ԲԵՐԿՈՎՅԱ

ՀՈԳԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԻՇ ԱՐԴՅՈՒՔ

215
F-58

1931

ՑԵՐԵՎԱՆ

215

R-58

Կ. ԲԵՐԿՈՎԻ

23 SEP 2003

ՀՈԳԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ՞ ԱՐԴՅՈՒՔ

Թարգմ. Բ. Ցեղիազարյան

ՀԱՊԱՏԱՅՅԱԼՆԵՐՆ Ի՞՞Չ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ՀՈԳՈՒ
ՄԱՍԻՆ

«Հոգյակս», — հաճախ ասում են մոտիկ մարդուն, հարազատին : «Դե՛ք, այժմ դո՞հ ե հոգիդ» — հարցնում ե ծերուկը պառավին՝ վոսկե ձկնիկի մասին յեղած հեքիաթում : «Հոգին ուրախանում ե», «Հոգին հիվանդ ե», — լսում ենք մենք ամեն մի քայլափոխում : Շատերն են կարծում, վոր հոգին ամենադիմավորը, ամենաարժեքավորն է մարդու մեջ : Հոգու զոյտության հավատը մարդիկ՝ կարելի յե ասել, մոր կաթի հետն են ծծում : Հավատացալ մարդու համար ոռ որ ե այն աշենլ . ինչ վոր առած է ասուվածաշնչում : Իսկ աստվածաշնչի «Ծննդոց զրքում» կարդում ենք մենք . «Յեկ տեր աստվածը մարդուն յերկրի հոգից ստեղծեց և նրա յերեսին կենդանի չունչ վշեց և մարդը կենդանի հոգով մարդ դարձավ»*) (գլ. 2-րդ հոդված 7-րդ) :

Ապա ուրեմն, յեթե հավատանք աստվածաշնչին, ինքն աստվածը հոգին ներփակեց մարդու մեջ : Հոգին աստվածային չունչ է : Հոգին մի ինչ վոր առանձին, մարմնի վոչ մի ընդհանուր առընչություն չունեցող բան է : Նա մեր մարմնի մեջն ապրում ե այնպես, ինչպես թոշունը վանդակում : Յերբ մարդը «իր վերջին չունչն ե վչում», հոգին դուրս ե թոշում մարմնից — վրա յե հասնում մահը : Այդպես ե ուսուցանում կրոնը : Այդպես են մտածում շատերը :

Ի՞՞ՉՊԻՍԻ ԿԱԽՈՒՄՆ ՈՒՆԻ ՄԵՐ ՀՈԳԻՆ ՄԱՐՄՆԻՑ

Սակայն տարորինակ արկածներ են պատահում մեր հոգու հետ : Ահա, ասենք, մի հանդիսատ, հեղ մարդ, քնտանիք սիրող մի հայր : «Մի բարեհոգի», — ասում են նրա մասին դրացիներն ու ծանոթները : Մի գեղեցիկ որ հիվանդացավ մեր իվան Պետրովիլը : Յեկ ի՞նչ դուրս յեկալ : Նա դարձավ դյուրագրգիռ, բծախրնշեր, նույնիսկ դաժան : Յերեխաներին ծեծում ե մեռցնելու չափ, կնոջ վրա դանակով ե հարձակվում : Վո՞րտեղ թագնվեց, ուրեմն,

*) Քաղմածքը բերված ե հայերեն աստվածաշնչից, Ե. Թ.



35947-62

նրա բարի հոդին։ Նրանից հետք ել չմնաց։ Բժիշկն առում ե., զնա ուղեղի հիվանդություն ունի, նրան պետք է տանել հիվանդանոց։

Վերցնենք մի ուրիշ որինակ։ Առում ե մատաղահաս աղջիկը հօրախություն իր ծնողների։ «Աղախու հոդի ունի, հրեշտական հոդյակ», — ել խոսք չի գտնում մայրը գովելու նրան։ 13—14 տարեկան հասակում նա հանկարծ ձեռք ե քաշում ուսումից, դառնում ե հանդուգն, կամավոր, կոպիտ։ «Կարծես թե ծածկաբար փոխարկել են յերեխային»։ Պանդատվում ե վշտացած մայրը։ Իսկ ի՞նչ ե պատահել։ Մատաղահաս աղջիկը հասունանում է, նա յերեխայությունից դուրս ե գալիս, դառնում ե հասունացած աղջիկ։ Նրա մարմնի մեջ խոր փոփոխություններ են առաջ դալիս, փորսնք անդրադառնում են նրա բնավորության, նրա վարքի վրա։ «Աղավնիական հոդին» անձնանշելի դարձավ։ Նա ինքն իրեն նման չե մարմնական այն փոփոխությունների աղջեցությամբ, վորոնք նրան ամբողջապես հուզեցին։

Իսկ յերբ ծերությունն ե վրա հասնում, միթե հոդին չի փոխվում։ Վերցը 20 տարեկան մի պատանու և տեսնե, թե ինչ կդառնա նա 40—50 տարուց հետո։ Միթե կարելի յե ճանաչել այդ կրակոտ, համարձակ, հուժկու պատանուն այդ դանդաղաշարժ, զուրուց ծերունու մեջ, վորը միայն իր հանդիսուն և թանգ շնահատում։ Ասցե՛ք, ուրեմն ո՞ւր և այստեղ այն հոդին, վոր զնահատում։ Ասցե՛ք, ուրեմն ո՞ւր և այստեղ այն հոդին, վոր ներշնչեց տեր աստվածը պատանու կամ ծերունու մեջ։ Ախր նը- րանք այնքան չեն իրար։

Ասենք, վոչ միայն հիվանդությունը կամ տարիքը, այլ նույնիսկ մասի մի վորեե կտոր կամ քառասուն աստիճանի ողու մի փոքրիկ բաժակ զդալի չափով աղջում են եեր հոդու վրա։ Մարդը բաժակակ զդալի չափով աղջում են նա հաղիվ հազ և չնչում, վոչ մի աշխատանքի ընդունակ չե։ Կերալ, ամրացավ— և այժմ նո թեալից ուր ասես՝ աշխատանքի, արշավանքի— թեկուզ պակասեցրու կուզ ուր ասես։ Կարծես նոր հոդի ներշնչեց նրան— միայն վոչ խիզախությունը։ Կարծես նոր հոդի ներշնչեց նրան— միայն վոչ թե տեր աստվածը, այլ մի կտոր վոչխարի միսը։ Յերիտասարդը խմեց մեկ-յերկու բաժակիկ ողի և զնաց սանձարձակություններ, խելառություններ, կոկվներ անելու։ Իսկ զբաստ վիճակում նա չափազանց խաղաղ ու հանդարտ ե։ Դարձյալ դուրս ե գալիս, վոր մի բաժակիկ ողուց հոդին փոխվում ե։

Բանից յերեսում ե, վոր այն՝ ինչ վոր մենք հոգի յենք անվանում, այսինքն՝ մեր մտքերը, մեր զգացմունքները, մեր ցանկությունները, կախումն ունի մարմնից։ Մեր բնավորությունը փոխվում ե համաշափ այն բանի, թե մեր մարմնի մեջ ի՞նչ այս ու այն

փոփոխություններ են տեղի ունենում։ Տեսնենք այժմ, թե մարմնի հատկապես վո՞ր մասից ամենից ավելի կախումն ունի մարդու ժամանակությունը, նրա ամբողջ վարքը։

Վերհիշենք մեր ծանոթ իվան Պետրովիշին, վորին հիվանդությունը «բարի հոդուց» մարդատյաց դարձեց։ Դրա պատճառն ուղեղի հիվանդությունն եր։ Հիշենք Հարբեցողին, վորն ինքն իրեն կորցրեց այն պատճառով, վոր սպիրտից գլուխը շշմեց, այսինքն՝ ուղեղը։ Ուղեղը մեր ամենազլավոր որգաններից մեկն է։ Որդանաներ են կոչվում մարմնի այն մասերը, վորոնք զբաղված են վորոց աշխատանքով։ Որինակ՝ ստամոքսը մարսողության որգանն է, թոքերը չնչառության որգաններն են, աչքը տեսողության որգանն է և այլն։ Իսկ ուղեղը ի՞նչ աշխատանք ե կատարում— կհարցնեք դուք։ Այդ բանը հասկանալու համար, պետք ե նախագիտ իմանանք թե ինչպես ե ներգործում մարդու վրա շրջապատող ժիշպայրը։

Ի՞նչո՞վ և կԱՌԱՎԱՐՎՈՒՄ ՄԵՐ ՄԱՍԻՆԸ

Բնության ամեն մի յերեսությ— արևի ճառապայթը, քամու աղմուկը, ծաղկի հոտը, տաքությունը, ցուրտը— ներդրությունն են ժեզ վրա վորոշ սրգանների միջոցով։ Լույսը— աչքի միջոցով, տաքն ու ցուրտը— կաշվի միջոցով։ Այդ որգանները կոչվում են զգացմունքների որգաններ— զգայարաններ։ Լույսը, ձայնը, հոտն դպայարաններն ընկնելով, ներգործում են նրանց վրա կամ, ինչպես ընդունակած ե ասել, զրգում են նրանց։ Այդ զրգիոնները հազորվում են գլխի կամ մեջքի ուղեղին նուրբ, սպիտակ թելերով— հյարդերով։

Գլխի ուղեղը— մի փափուկ զանգված, վորի մակերեսությը ծածկված է մոխրագույն պատյանով— զտնվում ե մեր դանդատուի մեջ։ Մեջքի ուղեղը հաստ սպիտակ ժապավենի տեսքով ընկած է վողնաշարի մեջ։ Մեջքի ուղեղից 31 զույգ նյարդեր են զնում գեղի մեր մկանակազմը (մկանները, միսը), փորոտիքը, իրանի կաշին, ձեռքերն ու վոտքերը։ Գլխի ուղեղից 12 զույգ նյարդեր գնում են գեղի զգայարանները, այսինքն՝ գեղի աչքը, ականջը, շիթը, լեզուն, կաշին, ինչովես և գեղի մկաններն ու փորոտիքը։

Դիցուք մարդը տաք սամովարին ձեռք ավեց։ Այրվածքը ներգործում ե չոչափման որգանի— կաշվի վրա։ Այրվածքից առաջ յեկած զբգինը նյարդի միջոցով հաղորդվում է մեջքի ուղեղին։ Ուղեղը մի ուրիշ նյարդի միջոցով— անդրադարձ հաղորդիչի միջոցով— մի տեսակ կարգադրություն, զարկ ե տալիս ձեռքի մկա-

նին գործողություն կատարելու : Միւսնք՝ ի պատասխան, կարճ-
վում ե, կծկվում ե—ձեռքը հետ և քաշվում :

Մի ուրիշ որինակ : Դուք ուտում եք: Ստամոքսն ընկնող կե-
րակութը զբառում ե նրա ներսի պատերը: Այդ զրդիւր նյարդի մի-
ջոցով հաղորդվում ե ուղեղին: Իսկ այնտեղից մի ուրիշ նյարդով
դալիս և հակառակ հօսանք, մի տեսակ կարգադրություն ստա-
մոքսի գեղձերին (այժմես են կոչվում ստամոքսի պատուի վրա
յեղած, փոքրիկ տոպրակները, վորոնք ստամոքսային թթու հյութ
են արտադրում): Այդ գեղձերը քշում են հյութը, իսկ հյութը
մարսնում ե կերակութը:

Այս յերկու որինակներից մենք տեսնում ենք, թե ինչպես ու-
ղեղը կառավարում է մեր մարմնի զանազան մասերի աշխատանքը:

Գլխի ուղեղի զրբծունեցությունն ե'լ ավելի բարդ ե, քան մեջ-
քի ուղեղինը: Մեր գանձումն ընկած ուղեղանյութը յերկու կիսա-
զներից և կազմված: Գլխի ուղեղի մոխրագույն պատշաճը մի ամ-
բողջ շարք մասերի յև բաժանվում: Մեկ մասը կառավարում ե ձեռ
քի աշխատանքը, մյուսը—վատքի, յերրորդը—ծնոտի, չորրոր-
դը—լեզվի և այլն: Ուղեղի ամեն մի բաժինը կենարոն ե, վորից
կարգադրություններ են ուղղվում նրան յինթակա որդաններին:
Առանց այդ կարգադրությունների որդանը, թեկուղ և բոլորովին
առողջ, չի աշխատի:

Այսպիսի գեղքեր են պատահում: Մարդը ման ե գալիս, աշ-
խատում ե: Հանկարծ նա ուշաթափ ընկնում ե: Մի վարոշ ժամա-
նակից հետո՝ ինչպես ասում են, «նրա ուշքը վրան ե գալիս», Սա-
կայն, նրա ձեռքն ու վոտքը գոսացել են, նա չի կարողանում նը-
րանց շարժել:

Ի՞նչ պատահեց: Հիվանդի ուղեղում արնհոսություն տեղի ու-
նեցավ: Ձեռքն ու վոտքը կառավարող մասը վնասված ե: Կենարու-
նից վոչ մի կարգադրություն, զրծողություն կատարելու վոչ մի
խթան չեն ստանում մեանները: Ահա թե ինչու նրանք գործազրկի,
անգործունյա յին մնում, թեղետև իրենք վնասված չեն: Հետե-
վանքը լինում ե անդամակույծ:

Այսին ել և պատահում: Մարդը ջարդվածք ստանալուց կամ
հիվանդությունից հետո՝ Հանկարծ դադարում ե տեսնելուց, թե-
պիս նրա աչքերը բոլորովին առաջ են և անինուս: Իսկ մի ուրիշը՝
վոչինչ չի բում, թեպիս նրա յերկու ականջներն ել անթերի յեն
և անինա: Իսկ ի՞նչ պատահեց նրանց: Հոգին, արդյոք, կուրա-
ցավ կամ խլացավ: Վո՞չ, բանը հոգին չե: Առաջնի ուղեղի ծոծ-

րակի ժամ և վնասված, վորը կառավարում ե տեսողությունը:
Իսկ յերկրորդի լսելիքի կենարոնն ե խանզարված, վորը զտնվում ե
ուղեղի քունքի մասում: Մեր գլխի ուղեղն աշխարհագրական քար-
տեղի յև նման, վորն ամբողջովին զծագրված ե, ամբողջովին առ-
անձին մասերի յև բաժանված: Ամեն մի մասը իր բեռնվածու-
թյունն ունի:

ԱԵՆՏՐՈՒԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ- ՍԻՍՏԵՄԸ

Յեվ այսպիս մեր ուղեղը՝ թե՛ գլխի և թե՛ մեջքի կենարունա-
կան աղարատն ե: Այդաեղից նյարդերի միջոցով հաղորդվում ե
նյարդային հօսանքը, իսկ նրա հետ ել— կարգադրություններ
զանազան բաննորական որդաններին— մկաններին, գեղձերին,
դպայրաններին և այլն: Յեթե նյարդը վնասված ե, կարգադրու-
թյունները չեն հաղորդվում. մկանները, գեղձերը դադարում են
աշխատելուց: Գլխի և մեջքի ուղեղը կազմում են կենտրոնական
Կարդային համակարգությունը: Այդ ապարատը կենարոնից հա-
մաձայնեցնում ե միացնում ե մարմնի բոլոր մասերի աշխատան-
քը: Յեթե այդ ապարատը չլիներ, մեր գյությունն անհնարին կլի-
ներ: Յեվ իսկապես, ի՞նչ կլիներ, յեթե բոլոր որդանները ցիրու-
ցան աշխատելին— ստամոքսն իրեն համար, սիրտն իրեն համար
և այլն:

ՅԵՐԲ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԵԶ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԸ ԿԱՐԳԻ ԶԻ ԳԱ

Այդպիսի հակամարտության դեպքում կյանքը չուտով կանգ
պետք ե առներ: Սակայն այդպիսի աններդաշնակություն մեջնում
չի պատահածմ, յերբ առողջ վիճակի մեջ ենք: Յեվ չի պատահածում
հատկապես ուղեղային կենարոնների կաղմակերպչական աշխա-
տանքի չնորհիվ: Այդ կենարոնները կառավարում են թե՛ մար-
դողությունը, թե՛ չնչառությունը, թե՛ շարժումը, թե՛ արյան
շրջանառությունը: Մեր մարմնի ամբողջ աշխատանքը ճշտորեն
կանոնավորված ե, նա ընթանում ե վորոշ որենքներով: Սիրար
ամեն բոլել վորոշ քանակությամբ արյուն ե հոսեցնում: Անոթնե-
րը, այսինքն՝ արնատար յերակները (արտերիանները), մղում են
այն գեղի ամբողջ մարմինը: Թոքերը տալիս են վորոշ քանակու-
թյամբ թթվածին—կենդանացուցիչ գաղ, վորն անհրաժեշտ և
կյանքի համար: Գեղձերը, այսինքն՝ ստամոքսում, աղիքներում,
բերանում յեղած նրբապատ սովորակիկները և այլն, վորոշ քա-
նակությամբ հյութեր են մշակում, վորոնք պետք են մարտողու-
թյան համար:

ինչպես տեսնում եք, կապի ապարատը առաղջ ժարմնի մեջ անընդհատ և գործում: Բոլոր որդանների աշխատանքը չաղկապված և համաձայն ցածր: Եթե այս բոլորը վոչ ամենենին ինչոր մի անտեսանելի անմարմին հօգու վազորմածությամբ, այլ չնորհիվ գլխի և մեջի ուղեղի, վորը կարող և տեսնել և չռափիել ամեն ժարդ:

Հիվանդների և գլխից վիրավորված մարդու վրա հաճախ կարելի յե հետաքրքրական բաներ դիտել: Ուղեղի վորեւ մասի վրա ազածքին հաջորդում և վորոց ընդունակության կորուսք ժարդը գտնում և անդամալույց, կույր, խուլ և այլն:

ԱՂԱՎՆԻՆԵՐՆ ՈՒ ՇՆԵՐԸ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՈԴՆՈՒՄ ԼՈՒԾԵԼՈՒ, ԹԵ ՀՈԳԻ ԿԱ. ԱՐԴՅՈՒՔ

Ուղեղի աշխատանքն ավելի լավ և ավելի լրիկ ուսումնաբերելու համար, զիտնականները կենդանիների վրա փողձեր են անում: Վորեւ կենդանու, ասենք շանը, խլորոփորմով քնեցնում են: Հետո բաց են անում նրա գանդի կափարիչը և մերկացնում են ուղեղային պատյանի վորեւ մասը: Այդ մասը գիտնականը գրգըռում և ելեկտրական հոսանքով: Ամեն անդամ այս բանն անելիու կծկվում և (քաշլում ե) կենդանու առաջին կամ հետին վոտքը, դժունը և այլն, նայելով թե հոսանքը վոր մասի վրա յե ուղղված:

Յեթե ուղեղի նույն այդ մասն ելեկտրականությամբ չգրգըռենք, այլ կտրենք-հանենք, այդ դեպքում հակառակ յերեւյթ տեղի կունենա: Կենդանու մարմնի հենց այն մասը կդուսանա, վորը ելեկտրական հոսանքից շարժվում եր:

Կենդանիների վրա ե'լ ավելի հետաքրքրական վորձեր ե'լին անում: Աղավնու կամ համի ուղեղի յերկու կիսադներն ամբողջապես կտրում-հանում ենին: Այդպիսի աղավնին բոլորովին կորցնում եր գիտակցությունը: Նա դառնում եր ալտոմատ: Թոշունն ամբողջ գամերով անշարժ նստում եր մի տեղում: Նա վոչ մի ուշադրություն չեր դարձնում վո՛չ թշնամու մոտենալու վրա, վո՛չ կերի վրա: Յեթե հատիկ եյին դնում նրա բերանը, նա կուլ եր տառիս այն: Բայց թոշունն ինքը շարժվելու ամենափոքր փորձն անդամ չեր անում հատիկը վերցնելու համար: Այդպիսի հանուղեղ՝ թռչունը կարող եր քաղցից սատկել, թեև կերը հենց իր կողքին եր:

Մի զիտնականի հաջորդից մեկ շան գլխի ուղեղի կիսադների ամբողջ պատյանը կտրել-հանել: Այդ բանը նա այնպիսի վարպետությամբ արեց, վոր կենդանին կենդանի մնաց: Բայց նա անտարեր և անդգտ գարձալ գեպի ամեն բան: Շունը նույնիսկ դա-

դարեց իր տիրոջը ճանաչելուց, վորը նրան տարիներով կերակրել էր իր ձեռքով: Շան ուղեղը հանելով, մենք գրկեցինք նրան զիտակցությունից: Շանն անվանում են խելոք կենդանի, հիմում՝ նրա հիշողությամբ, ընդունակություններով: Բանից դարս և դամիս, վոր նրա բոլոր ընդունակություններն անհետանում են, հենց վոր հեռացնում են նրա ուղեղը: Ապա ուրեմն, չան բանականությունը կախումն ունի վոչ թե վորեւ մի առանձին, անմարմին հոգուց, այլ ուժի ուղեղից:

Ի՞՞Զ ԿԱՊ ԿԱ. ՄԵՐ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳԼԽԻ ՈՒՂԵԼԻ ՄԻԶԵՎ

Դե ախր նա շուն ե, կասեք դուք: Կենդանիները հոգի շունեն այլ՝ չողի: Ի՞նչ հարկ կա նրանց մասին խոսելու: Ուրիշ բան և ժարդը, վորին աստված կենդանի հոգի յե ներշնչել:

Բայց ձեղ, ի հարկե, պատահել է խելազարների տեսնել, այսինքն՝ հոգեպես հիվանդ մարդկանց: (Հոգեպես հիվանդ՝ հնաշած անուն ե. յեթի հոգի չկա, ուրեմն չի կարող նաև հոգեպես հիվանդ լինել): Դուք դիտեք, վոր հոգեկան հիվանդությունը կարող ե ամենախելոք մարդուն կիսապուշ, իսկ յերեւեն բոլորովին տպուց դարձնել: Նա ամեն բանի վրա նայում և բթամտորեն, անտարբերությամբ: Նրա վարժունքը նույնքան անմիտ է, վորքան այն աղավնու վարժունքը, վորի գլխի ուղեղը կտրել-հանել եյին: Յերբ մեռնելուց հետո այդպիսի հիվանդների զանգը բաց են անում, նրանց ուղեղի մեջը լուրջ քայլքայումներ են զտնում: Ի ծնե թուլամբաների զանազան թերությունները նույնպես հենց ուղեղումն են դտնում: Այն զինվորները, վորոնք պատերազմում ճակատից կամ գաղափելից են վիրավորված յեղել, ուղեղի վնասումով համար դարձել են հոգեպես հիվանդ կամ թուլածիս:

Այստեղից պարզ է, վոր թե՛ մարդու և թե՛ կենդանիների սոմբողջ զիտակցական կյանքը կապված է գլխի ուղեղի հետ: Բանից դուրս և զալիս, վոր գլխի ուղեղը վոչ միայն կապի կենտրոնական ապարատն ե մեջքի ուղեղի հետը միասին: գլխի ուղեղը՝ բացի դրանից, զիտակցության որգանն ե:

Յերբ մենք մտածում ենք, յերբ մենք զգում ենք, զլոի ուղեղի ժոխրագույն պատյանի մեջ, առանձնապես ճակատի և դադարթի մասում, ուժգին աշխատանք և յեռում: Այդ աշխատանքը կատարվում ե այն մանրեկ կենդանի գնդիկներում, վորոնք գանվում են ուղեղի պատյանում, նյարդային վանդակներում: Քանի զես աշխատում է ուղեղը, զիտակցությունը կա: Դադարեց ուղեղի աշխատանքն

այս կամ այն պատճառներով— զիտակցությունը հանդավէ։ Այդ ժամանակի ասում են՝ նա առանց ուշքի յէ, առանց զիտակցության։

Իսկ ուղեղի աշխատանքը ընդհատվել կարող է զանազան պատճառներով։ Կամ վախեց, յերբ հուզմունքից արյունը ուղեղից հետ և հոսում է։ Այդ ժամանակի, յերբ ուղեղը սնվելու րան չունի, դուք կորցնում եք զիտակցությունը։ Կամ մարդն ուղեղի ցնցում և ստմնում հարվածից, վնասվածքից, կամ նա կորցնում է զիտակցությունը վարակման թունովուումից (տիֆով բռնվելիս, արյան վարակման ժամանակ)։ Կամ՝ վերջապես, այնպիսի թունով թունավորվելիս, ինչպիսին սովորան է։ Այս բոլոր վեպքերում կարող է տեղի ունենալ կամ զիտակցության կատարյալ կորուսում, — այդ ժամանակ մարդը դիակի օկես ընկնում է, — կամ վոչ լիակատար կարուսում, — զառանցանքով, անհանգստությամբ և այլն։

ԿԵՆՏԱՆԻՇԵՐԻ ՅԵՎ ՄԱՐԴՈՒ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսանք, վոր շան և մարդու զիտակցությունը կախումն ունի ուղեղից։ Միենույն բանն և մյուս կենդանիների մեջ՝ Քանի ավելի մեծ է կենդանու զիմու ուղեղը, այնքան ավելի բարձր են նրա մտավոր ընդունակությունները։ Զկան ուղեղը շատ փոքր է, առնեք խելք ել, ինչպես առում են, քիչ հնարիփ։ Թունի ուղեղը մի քիչ ավելի մեծ է—թունին կարելի յէ վորեն բան սովորեցնել։ Առնեք այն ել չես կարող ասել, վոր նա խելքի տուրակ է, ի զուր չէ, վոր հիմար մարդու համար առում են, թէ նա թունի ուղեղ ունի։ Այս, կաթնասուն կենդանիների ուղեղը համեմատաբար ավելի մեծ է։ Ուստի և նրանք թունուներից ավելի ընդունակ և ավելի հասկացող են։

Բայց ամենից ավելի մեծը մարդու ուղեղն է։ Նա մոտավորապես 1 և կես կիլոգրամ և կըսամ։ Բացի իր մեծությունից՝ մարդկային ուղեղը տարբերվում է նաև նրանով, վոր նրա ամբողջ պատյանը ծալքավոր է, ակոսներով կարտված։ Մինչդեռ ձկան, դորոի, թունի ուղեղը բոլորովին հարթ է։ Կաթնասուններինը ծարքը ունի, բայց դրանք նոսր են և ծանծաղ։

Իսկ այդ բանն ի՞նչ նշանակություն ունի։ Իսկ գուշ պատկերացրեք ձեզ, վոր մի մեծ կտոր գործվածք պետք է տեղավորեք մի փոքրիկ տուփի մեջ։ Այդ ի՞նչպես պետք է անեք։ Պետք է ծալք, ծալքը բարերավ համար։ Այդպես մարդու մասունքը կտորի մեջ պահպան է։ Այդպիսի մասունքը կտորի մեջ պահպան է։ Կամ նա բավարար չափով հյութ չ արտադրում արյան մեջ։

Ճաշ է։ Ահա թե ինչու ամենախելոք եյակի՝ մարդու ուղեղի պատճանն ամբողջապես ծալքավոր է և գալարուն։ Այդ բանը ցույց է տալիս, վոր ուղեղի մակերեսությը մեծ է, շատ ընդարձակ մտավոր ընդունակությունների համար։ Ահա՛ թե ինչից կախումն ունի մեր զիտակցությունը— ուղեղի աշխատանքից։ Իսկ հոգին այստեղ ի՞նչ գործ ունի։ Բոլորովին և վո՞չ մի գործ։ Այդ բոլոր խոսակցությունները՝ կենդանի հոգու և «աստվածային չնչի» մտաին, տատիկի հեքիաթներ են։ Յեկ այն ել շատ վնասակար հեքիաթներ։

ՀՅՈՒԹԵՐՆ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ

Մենք արդեն զիտենք, թե ինչուի զսպանակներ են կառավարում մեր մարմնի աշխատանքը։ Նբանցում վոչ մի հաներուկային բան չկա։ Դրանք նյարդային կենտրոններ են, վորոնք ընկած են գլխի և մեջքի ուղեղում։ Վերջին ժամանակներս զիտությունը մի կարեոր գյուտարեց։ Բացի նյարդային կենտրոններից, մեր մարմնի աշխատանքին ընթացքը են տալիս անհապահ հյութային անուրաքանչային բարձրություն և առավելացնելու համար։ Եթե քանի գեղձեր այդ հյութերն արտադրում են, ուղղակի արյան մեջ։ Մենք արդեն զիտենք, վոր գեղձեր են կոչվում այն որդանները, վորոնք մարմնի համար պիտանի վորեն հյութ են արտադրում, որինակ՝ թուք, մաղձ, ստամոքսային հյութ։ Մեր վզի վրա առջեկց տեղավորված է վահանակներ գեղձը։ Գիտնականներն ապացուցեցին, վոր նա հսկայական դեր է կատարում մեզ համար։

Գուցի ձեզ պատահել ե բնածին ապուշներ, այլանդակներ տեսանել։ Նբանք բալորն ել անմիտ բութ գեմք ունեն, ուռած, փրփած կաշի, փոքր, յերբեմն նույնիսկ թողուկային համար։ Բանից գուրս և գալիս, վոր այդ բոլոր հիվանդների վահանաձեւ գեղձը կամ ամենիվին չի աշխատում, կամ նա բավարար չափով հյութ չ արտադրում արյան մեջ։

Իսկ ի՞նչպիս բութինք այդ հիվանդությունը։ Աստծուն չաղոթենք արյոյք, վոր նա նոր հոգի ներշնչի, բայց վոչ այդպիսի բութ և անմիտ հոգի։ Աղոթիր ի՞նչքան քեզ հածելի յէ, այդ այնքան կողնի, ինչքան մեռելին բուրվառը։ Գիտությունը մատնացույց է անսում մեզ բուժման մի ուրիշ յեղանակ։ Հիվանդին կերակրում են վորեն կենդանու, որինակ՝ յեղան, կամի, չորացրած զահանաձեւ գեղձի փոշով։ Համար հիանալի արդյունքներ են ստացվում։ Մեր հիվանդի աշքերը փայլ առան, գեմքը՝ կենդանություն, իմաստ, փրփածություն անհատացավ։ Նբանքուր ընդունակություններն

սկսեցին զարդանալ, հասակը բնականուն-նորմաէ և ընթանում—
մեկ խոսքով մեծ ըարելափում առաջ յեկավ:

Կենդանիների վրա կատարված փորձերը հաստատում են վա-
շանական գեղձի հօփայական աղղեցությանը մարմնի աճման և
զարդացման վրա: Հայտնի յէ, վոր չերեխուկը գորտ զարձնելու
համար մի քանի շարաթ և պահանջվում: Բայց փորձենք չերե-
խուկին կերակրել վահանածիվ գեղձով: Յավ նա մեր աշքի առաջ
գորտ կդաւնա զարմանալի արագությամբ: փոխանակ մեկ-յերկու
ամսվա, այդ փոխարկության վրա վորեն 5—6 որ և զնում: Հա-
կառակ փորձ անենք: Կորենք-հանենք չերեխուկի վահանածիվ գեղ-
ձը և նա ամեննելին գորտ չի զառնա: Պարզ ե, վոր կենդանիների,
մեզ աղղակից այդ կենդանի եյակների մարմնը կառավարվում է
միենույն զսպանակներով, ինչպես և մեր սեփական մարմնը—
նյարդային կենտրոններով և ներսի հյութերով:

ԽՆՉՊԵՍ Ե ԱԶԴՈՒԽՄ ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԱՆՔԻ ՎՐԱ

ՍԵՌԱԿԱՆ ԳԵՂՁԸ

Մեզ համար տյնքան կարեոր կենդանացուցիչ հյութեր վոչ
ժիայն վահանածի գեղձն և արտադրում, այլև մի շարք ուրիշ գեղ-
ձեր: Վերցնենք որինակ, սեռական գեղձները— տղամարդու սերմ-
նարանները, ինուց ձվարանները: Հիշյալ գեղձերն, ինչպես հայտնի
յե, սերմ և ծու յեն մշակում: Այդ մասնիկների միավորամից
կազմվում է ասղմը— ապագա յերնիան: Սակայն, բացի գրանից
սեռական գեղձերն արտադրում են արյան մեջ նաև առանձին հյու-
թեր, վորոնցից կախումն ունի սեռային հասունությամբ: Նրանց
աղղեցությամբ 15—16 տարեկան տղաների ձայնը կոպտանաւմ և,
թեղեր զուրութափու: 13—14 տարեկան աղջիկը ամսական, դաշ-
տան և ունենում: կորածել և դառնում կուրծքը և այլի: Մեկ
խոսքով՝ տղան աստիճանաբար տղամարդ և գառնում, աղջիկը—
կին: Մարմնական այդ փոփոխությունների հետ միասին հաճախ
լուրջ փոփոխություններ են կատարվում նաև բնակորսության մեջ: Աղջիկը կամ տղան անձանաչելի լինելու չափ փոխվել կարող ե:

Իսկ ի՞նչն և պատճառն այդ փոփոխության: Աստված նոր հո-
գի՝ ներծնչեց արդյոք: Վո՞չ, պատճառը սեռական գեղձի մեջ և,
նրա հասունության և հյութերի բուռն արտադրության մեջն է:

Իսկ ի՞նչպես և փոխվում մարդու ամրող կերպարանքը, յեթե
նրանից հանենք սեռական գեղձը: Այսպիսի խեղանդամների կարե-
լի յե տեսնել ներքինի-աղանդավորների—կոտլած-աղանդավորնե-
րի— մեջ: Նրանց գեմֆի մազերը թափվում են, դեմքն անմորուս,
հայը բարակ, ճշան և գառնում: Մի՞թե աստվածային քմահա-

ճույքով նրանց տղամարդկային հոգին կանացի հոգու փոխվեց:
Պարզ ե, վոր վոչ: Բանն այսուել այրական-տղամարդու— հոգու
կորուսությունը չե, այլ այրական սեռային գեղձը: Իսկ նրա արտազրու-
թյունից, նրա հյութերից կախումն ունեն այնպիսի նշաններ, ինչ-
պիսիք են բեղերը, մորուսը, ցածր ձայնը և այլն:

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԽՆՉՊԵՍ ԵՆ «ՆՈՐ ՀՈԳԻ ՆԵՐԾՆՉՈՒԽ»

Մեկ անդամ ել դիմենք մեզ աղդակից կենդանական աշխար-
հին: Մուկովյան մի դիտնական հետեւյալ փորձերն արեց հավերի
և աքլորների վրա: Նրանց սեռային գեղձները կտրեցին հանեցին,
աքլորի—սերմնարանը, հավի—ձվարանը: Մի քանի ամսից հետո
աքլորի կատարը կնճոռոտեց, պոչը կախ ընկավ, ձայնը կորավ: Մեր
աքլորը խեղճացավի և դաղարեց հավերին հետապնդելուց իսկ հավի
կատարը ընդհակատակը, մի փոքր մեծացավ, նրա վրա աքլորի
փետուրներ աճեցին: Իսկ ի՞նչ ստացվեց: Եերկու անսեռ եյակներ,
երար նման: վոչ ձուկ, վոչ միս, վոչ հավ, վոչ աքլոր:

Սակայն գիտնականը դրանով չբավականացավ: Նա աքլորի
վորոշ տեղը ձգեց և նրա կաշվի տակը փոխադրեց հավի ձվարանը:
Իսկ անսեռ հավի մեջը փոխադրեց աքլորի սերմնարանը: Փոխա-
դրված գեղձերն սկսեցին արտադրել իրենց հյութերը, վորոնք ար-
յան հետ միասին տարածվում եյին ամրող մարմնի մեջ: Մի փորոշ
ժամանակից հետո աքլորի գեղձ ունեցող նախկին հավի կատարը
ալ կարմիր գույն ստացավ, խեղախորեն ցցվեց պոչը: Նա բարձր-
«կուկուկու» յեր կանչում և վազում եր հավերի հետեւից: Իսկ
հավի գեղձ ունեցող նախկին աքլորը հավից տարբերվելուց բոլո-
րովին դաղարեց: Մեկ խոսքով, գիտնականը հավին աքլոր դարձ-
րեց, իսկ աքլորին՝ հավ:

Մեծ ե գիտության զորությունը: Ուսումնասիրելով կենդանի
բնությունը, գիտնականը նրան իրեն և յենք-արկում և սովորում է
փոխական իրան իր հայեցողությամբ: Մինչդեռ հավատացյալի հա-
մար աքլորի և հավի հետ պատահածի պատմությունը բոլորովին
անհասկանալի յեն: Այդ ի՞նչպես աքլորի հոգին հավի հոգի զար-
ձավ և՝ ընդհակատակը: Իսկ յեթե կենդանին հոգի չունի, դրանով
բանը չի հետանում: Ախր աստված ամեն մի արարածի իր ձեռնի
ստեղծեց: հավին—հավ, աքլորին—աքլոր: Իսկ գիտնականը, ինչ-
պես յերեւում ե, վերափոխում և աստվածային արարածին՝ հա-
կառակ տեր աստծու կամքի:

Գիտնականը սովորել ե վերափոխել թե՝ կենդանիներին, թե՝

Տարդկանց : Մենք արդեն խոսել ենք բնածին ապուշների մասին : Քիչ չեն պատահում նաև ամեն տեսակի ի ծնե Հրեշավորություններ — հականեր, թղուկներ և այլն : «Աստվածային պատիմ՝ մեղքերի համար», մտածում և հավատացյալը : Իսկ գիտնականը գործ է դնում փոշի՝ կամ վահանաձեվ, սեռային, յերիկամունքի և ուրիշ գեղձերի ներսի արտադրության հյութեր : Այդ յեղանակով բուժումը յերեմն հիվանդ մարդուն նորմալ մարդ և դարձում : Իսկ այդ ի՞նչպես հականանք . աստված ծուռ հոգի ներշնչեց, իսկ գիտնականը շտկեց նրան :

Ահա հավատացյալի համար ե'լ ավելի զարմանալի դեպք : Յերեխան ասես թե մեռած ծնվեց . նա ամբողջապես կապույտ և կամ գունատ, ինչպես մեղրամոմ : Յերեխան անշունչ ընկած և, առանց շարժողության, առանց ճիչ արձակելու — ասես դիմակ լինի : Հավատացյալը կասի, վոր աստված նրան հոգի չի տվել : Ապա ուրեմն, վիճակված չե, վոր նա ապրի . ախր մարմինն առանց հոգու գոյություն ունենալ չի կարող : Հարազաներն աղերսում են աստծուն դժալ, հոգի ուղարկել, կանչում են տերտերին : Վո՞չ մի կոպեկի ոգնություն նրանից : Բայց ահա թժիշկը միջամտեց գործին : Նա սկսում է թեթևակի խիել յերեխային, ճոճել նրան, արհեստական շնչառության յենթարկել նրան : Նրանով զրազվում և բժիշկը մի քառորդ ժամ, կես ժամ, յերեմն մեկ ժամ : Յերեխան սկսում է չնչել, սկզբում թույլ, հաղիվ-հազ, հետո հետզհետե տվելի ուժեղ և ավելի խոր : Յեվ վերջապես սենյակը թնդում է բարձր ճիշով : Յերեխան կենդանացավ :

Այդ ի՞նչ զարմանալի բան և : Աստված հոգի չի տվել, իսկ բըժիշկը վրտեղից վոր և ձեռք բերեց նրան : Վո՞րտեղից ճարվեց հոգին և առաջ վո՞րտեղ եր նա : Ինչո՞ւ աղոթքը չողնեց, այլ բժշկի հմտությունն ողնեց : Վորովհետեվ վոչ մի հոգի գոյություն չունի : Վորովհետե հոգին այլտեղ բացարձակապես վոչ մի գործ չունի : Յերեխային փրկեց արհեստական շնչառությունը : Նա չեր չնչում, բժշկը դանազան միջոցներով ստիպեց նրան չնչել : Աղը ներս խուժեց յերեխայի թոքերի մեջ, արյունը վազեց նրա մարմնով — և յերեխան կենդանացավ :

ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ԿՅԱՆՔԸ ՄԱՐՄՆԻ ՄԵՌՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ծննդից մահվանն անցնենք : Ի՞նչ և մահը : Հոգու անջատում մարմնից, ասում են հավատացյալներ : Հոգին դուրս թոավ մարմնից և վերջ կյանքին : Սակայն արդեն վազուց ինչ-ինչ յերե-

կույթներ են հայտնի, վորոնք բոլորովին չեն հարմարվում այդ մեկնության :

Սրանից գեռ յերկու հաղար տարի առաջ գիտնականները կըտրեցին-հանեցին կենդանի գորտի կամ կրիայի սիրտը և գիտում եյին այն : Բանից դուրս և զալիս, վոր նա մի քանի որ շարունակ ե բարախել : Յեվ այսպես, հանված սիրտը շարունակում է ապրել մարմնից դուրս :

Գորտն ու կրիան սառնարյուն կենդանիներ են, նրանց սրտերը պարզ սրտեր են : Նրանք առանձին տաքության կարիք չեն զգում : Իսկ ահա ճագարի կամ կատվի սիրտը կենդանի մարմնի մեջ շարունակ վողողվում է 37-ից 40 աստիճան ջերմություն ունեցող տաք արյունով : Արյունից նա մի առանձին զաղ-թթվածին և ստանում, վորն անհրաժեշտ է կյանքի համար և անսպավետ նյութեր—շաքար, զանազան աղեր և այլն : Առանց այդ պայմանների տաքարյուն կենդանու սիրտը ապրել չի կարող :

Լա՞վ ժամածում և գիտնականը : Եես կտամ նրան ամենը, ինչ վոր պետք է : Յեվ կտրել-հանելով ճագարի սիրտը, գիտնականը դեսպի այն տանող մեծ արյունատար յերակի միջոցով ներարկում և ժիացացրած լուծույթ, վորը իր կաղմությամբ նման և արյան . նրանում կան և աղեր և թթվածին և մի քիչ շաքար : Յեվ ճագարի սիրտը բարախում է այնպես, վոր կարծես թե վո՞չ մի բան ել չի պատահել :

Մինչեվ այժմ մենք կենդանիներին եյինք որինակ վերցնում : Բայց այլպիսի փորձեր գիտնականներն անում եյին նաև վոչ վազուց մեռած մարդկանց սրտերի վրա : Սրանից 25 տարի առաջ ուսու գիտնական կուլյարկոն մի յերեխայի դիակից կտրեց-հանեց սիրտը, վորը նախընթաց որը մեռել եր թոքերի բորբոքումից : Այդ սրտի միջով նա բաց թողեց տաքացրած լուծույթ թթվածնի հետ միասին : Յեվ ի՞նչ դուրս յեկավ : Մանկական սիրտը շատ ժամերով դեռ շարունակում եր բարախել : Կուլյարկոյին հետեւելով միևնույն փորձն անում եյին նաև ուրիշ գիտնականներ յերեխաների և հասակալորների դիակներիցը հանած սրտերի վրա : Այդ ինչպես բան է : Մահվան մոմենտում հոգին մարմնից թռավ և կյանքի վախ հանը պետք ե գար : Իսկ սիրտը՝ յերեսում է, վոր կենդանի յեւ :

Բայց, գուցե թե, հենց սրտումն է նստած հոգին, կասի ընթեր յոդներից մեկն ու մեկը : Ամբողջ մարմնը մեռած է և միայն սըրումն է պահպում հոգին : Այդպիսու և արդյոք : Մենք այդ հարցի պատասխանը կստանանք, ծանոթանալով մի ուրիշ ուրիշ գիտնա-

կանի, պրոֆեսոր Կրավկովի վայլուն փորձերի հետ։ Զարժանալի՝ առաջանա եր ներկայացնում նրա աշխատանոցը, լաբորատորիան։ Այստեղ կարելի յեր տեսնել թե՛ ճաղարի ականջներ, թե՛ մարդկային մատներ, վարոնք ամբողջ շարաթներով և նույնիսկ ամիսներով ապրում եյին մարմնից անջատ։ Մատների վրա նույնիսկ յեղունդներն աճեցին, ինչպես կենդանի մարմնի վրա։ Խոկ ինչո՞վ եր պահպանվում այդ փոքրիկ, իրենց մարմիներիցը պոկված որդանների կյանքը։ Շարունակ մեղ ծանոթ տաքացրած լուծույթով, վարը ներարկվում եր արյունատար յերակների միջոցով։

Ուրեմն ի՞նչ յեղավ հոգին։ Դուրս ե դալիս, վոր մեն-մենակ հոգին կարելի յե բազմաթիվ մասերի կարտել։ Հոգու կառարներն ապրում են վոչ միայն սրտում, այլև ամեն մի ականջում, ամեն մի մատի մեջ, ամեն մի յեղունդում։ Վոչ վոք, ի հարկե, այդպիսի ծիծաղաշարժ բաներ լրջորեն չե պնդի։ Մնում ե ընդունել, վոր հոգի ասածդ մի անհեթեթ առասպել ե։ Բանը պարզ է, ինչվոր անմարմին հոգու մեջը չե, այլ վորոշ նյութ ական պայմանների մեջն ե։

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Գիտությունն ուսումնասիրում ե այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են կյանքի պահպանության համար։ Նա խորապեաթափացում ե կենսական յերեսույթների եյությունը։ Յեկ դրանով ել գիտությունը պայքարում ե մահվան դեմ։ Ի հարկե, ամեն կենդանի բանի համար մահն անխոսափելի յե։ Սակայն, այն աշխատանքը, վոր կատարվում ե մարմնից հանած որդանները կենդանացնելու վրա, շատ բան ե խոստանում մեղ առաջիկայում։ Այդ անհապարհով գիտությունն իրար հետեւից գավառակներ և հետ խըռում մահվանից և տանում ե դեպի մարդու կյանքի յերկարացումը։ Կենդանիների վրա փորձեր անելով գիտնականներն արդեն աղջեցուցիչ արդյունքների հասան։ Նրանք կենդանացնում են վոչ միանջները, սիրու, աղիքները և այլն, այլ նույնիսկ ամբողջություններ։ Շան կտրած զլուկը, վորը գիտնականն արյունով ե սնում, ամբողջ ժամերով ապրում ե լիակատար կյանքով։ Նա կկոցում ե աչքերն ուժեղ լույսի ժամանակ, բաց ե անում առամեները, պնչերը խուտուտ ածելիս և նույնիսկ մի կտոր կերակուր ե կուր տակիս, վորը՝ իհարկե, դուրս ե թափվում։ Այդ եւ քիչ ե. 30 րոպէ առանց սրտի բարախման, առանց չնչառության բեղդված շանը կյանքի կոչելը հաջողվում եր գիտնականներին։

Մարդու վրա կատարվող փորձերը, հասկանալի յե, շատ անգամ ավելի դժվար են, քան կենդանիների վրա կատարվող փորձերը։ Սակայն, մեր գիտնականներն արդեն սովորեցին կենդանացներ ըրահեղձին, ծխահարին, չնչահեղձին, վորի «հոգին դուրս թռալ» եւը թե։ Գիտությունը հաստատուն քայլերով առաջ ե զնում։ Նա մանացուց և անում մեղ ուղիղ ճանապարհը բնությունը նվաճելու համար, վաղաժամ մահվան դեմ պայքարելու համար։ Հետեւնքը ուրեմն այդ հավատարիմ առաջնորդողին և ամեն կերպ ոգնենք գիտությանը, վորն իր հերթին հաղթական յերթով քարուքանդ ե անում հոգու մասին յեղած անմիտ առասպելները։

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵՑԻՆ ՀԱՎԱՏԱԼ ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆԻ

Մենք համուկիցինք այն բանում, վոր վոչ մի հոգի գոյություն չունի։ Այն, ինչ վոր մենք անլանում ենք հոգեկան կյանք—մեր մաքերը, մեր զգացմունքները, մեր ձգտումները, իսկապես ուրիշ բան չե, բայց յեթե գլուխ ուղեղի ոշխատանքի արդյունք։ Առանց զլիս ուղեղի գիտակցություն ել չի կարող լինել։ Մեր մարմինը առաջանարար ե մեռնում։ Բայց յեթե այդ այլ ուղեղի գիտակցություն ել չի կարող լինել ամենին վորեկ խորհրդակություն և մեջքի ուղեղը և զանազան զեղձեր, վորոնք արյան մեջ հյութեր են արտադրում։ Մասը բոլորովին այն պատճառով չի առաջ գալիս, վոր վորեկ հոգի բաժանվեց մարմնից։ Մեր մարմինը աստիճանաբար ե մեռնում։ Նրա առանձին մասերը կտրող են յերկար աղջուկ ամբողջի մեռնելուց հետո։

Բայց յեթե այդ այլ ուղեղի հեղինակ հոգին գոտուարկ բան ե, ապա ուրեմն վորակելից առաջ յեկալի հոգու հավատը։ Յե՛րբ և ինչպե՞ս սկսեցին մարդիկ հավատալ հոգու գոյությանը։ Այդ հարցին պատասխանելու համար մենք պետք ե հետազարձ հայացք քցենք մարդկային ցեղի անցյալի վրա։

Մեղնից շատ տասնյակ հազարավոր տարիներ առաջ ապրած մեր նախնիքը բոլորովին նման չեյին մեղ՝ ձեղ հետ միասին։ Այդ նախնական մարդկեկ ել այլեկի վայրենի յեխն, քան այժմ յան ամենահամենաց ցեղերը—ավատրակական վայրենիները։ Նրանք ապրում ենին այրերում, վոր խում եյին դիշակեր գաղաններից։ Բայց իրար ամենակոպիտ պործիքներից, նրանք ուրիշ պործիքներ չենին չեյին կարողանում։ Ահա թե ինչու այդ ժամանակը կոչում և քարե դար ։ Նրանք նովում եյին պտուղներ, արմտիք, մանք կենդանիներ համարելով։ Խոկ յեր զործիքների տեխնիկան բա-



ըելավկեց, սկսեցին գաղաններ վորսաւ: Նրանք թափառում եյին փոքրիկ խմբերով. ամայի յեն դարձնում մի վայր, քոչում են մի ուրիշ վայր:

Այն ժամանակներում չկային վո՞չ աշխատանքի բաժանում, վո՞չ զանազան հասարակական դասակարգեր—զա մի յուրատեսակ կոմունիդ եր: Սակայն, նախնական կոմունիզմն այնքան եր տարբերում ապարագի կոմունիզմից, վորքան հին ժարդու շինած քարե կոպիտ կացինը տարբերվում է կոմբայնից: Զե՞ վոր կոմունիստական հասարակության մեջ մարդիկ իշխելու յեն բնության վրա: Նրանք հստիպեն բնության ուժերին ծառայել իրենց: Իսկ քարե զարի վայրենի, անողնական, առեւտ ժարդիկն իրենք բնության դերիներն եյին:

Նախնական մարդու բոլոր ուժերը ուտելիք ճարելու վրա եյին սպառում: Երջապատի վրա մտածելու հետ նա գործ չուներ: Նո քոչորական կյանք եր վարում: Հիվանդներն ու ծերունիները բախտի քմահաճույքին եյին թողնվում: Նրանց կերակրելու բան չկար—ամեն վոք դժվարությամբ իրեն համար եր ճարում:

Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ նախնական մարդը վորապության և անցնում, իսկ հետո՝ նաև սկզբնական յերկրագործության: Յերեվան նն դալիս յերկարատե դադարառուումներ մի տեղում: Դաղարներում նախնական մարդը առաջին անգամ ավելի մոտիկից և դիտում մահվան յերեվույթը: Նա դիտում և դիտակի քայքայումը: Սակայն, յերազում նա հաճախ մեռածին կենդանի և անվնաս և տեսնում: Վայրենին յերազն իրական կյանքից չի զանագանում: Նա համոզված ե, վոր տեսնում ե իր մեռած աղդակցին կամ նրա «հոգին», ուրեմն՝ թեև նրա գեակը քայքայվեց, բայց չոգին շարունակում է ապրել:

Այդ բանում համոզում է նախնական մարդուն նաև մահվան պատկերը: Նա տեսնում եր, թե ինչպիս մեռնող մարդը հետղծետե ավելի խոր և ավելի քիչ է շնչում: Յեկ վերջապես վերջին հասացների հետ նա անզգայանում է և մնում անշարժ: Մեռնողը փշում է շունչը, նրանից ինչ վոր մի բան է դուրս դալիս: Յեկ այդ «ինչ վոր բանը», այդ շունչը, այդ վոգին ե, վայրենու կարծեքով, վորը յերեվում ե նրան յերազում: Ամեն մի մարդու մեջ նստած ե մի ինչ—վոր յերկակ, մի ինչ վոր անտեսանելի եյակ, այդպես և մտածում նախնական մարդը: Մեռնելուց հետո քայքայվում է անհետանում և միայն մարմինը, իսկ յերկակը, «վոգին» իբր թե մնում ե:

Քնի մեջ մարդու յերկակը կարող է թոշել, թափառել աշխար-

հում, իսկ հետո վերադառնում է մարմնի մեջ: Այդպես և բացարում վայրենին յերազատեսությունները: Յերբեմն յերկակը, այսինքն՝ հոգին, արթության մեջ հեռանում է մարդուց և նա մեռնելի պես ընկնում է: Սակայն, մի վորով ժամանակից հետո հոգին վերադարձնում է և մարմինը կհնդանանում: Այդպես և մեկնում ուշաթափությունը նախնական մարդը:

Մենք տեսնում ենք, վոր հոգու մասին ունեցած հասկացողությամբ նախնական մարդը փորձում է բացատրել իրեն համար անհատականի յերեվույթները: Մեզ հայտնի յեն, թե ինչպես ե կտուցված մեր մարմինը, ինչպես են աշխատում ուղեղը, սիրու, թոքերը և մյուս որդանները: Մենք գիտենք, վոր քնի մեջ ուղեղը անկարգ և անկանոն և աշխատում—այստեղից ել առաջ են գալիս յերազական տեսիլքները: Մեզ հայտնի յեն, վոր յերբ մարդու սրտի աշխատանքը զանազան պատճառներով ժամանակավորապես թուլանում է, նա ուշաթափվում է: Իսկ մեր հին նախնին այս ամենը վո՞րտեղից պետք ե գիտենար: Նախնական մարդը նույնպիսի հսկացողություն ունի իր սեփական մարմնի կառուցվածքի մասին, ինչպես այրի արջը, վորին նա վորսում է:

Ասենք, նախնական մարդու աշխատանքն իսկ նույն մտքերն ե հզանում: Աչա նա նետում է իր փայտը կամ կարճակոթ տեղը: Գործիքն այն պատճառով է շարժվում, վորովհետև ձեռքը նրան շարժողության մեջ զրեց: Իսկ ի՞նչն է շարժում մարդու ձեռքը կամ վառքը: Ակներեն ե, վոր նրա ներսումը նատած է մի ինչորը յերկակ, մի ինչվոր հողի, վորը շարժում է նրա անդամները: Ուրիշ բացարություն չունի նախնական մարդը: Զե՞ վոր նա վոչինչ չփառե վոչ մկանների մասին, վոչ մկանների մասին:

Հին մարդը այգպիսի շարժիչ ել ուսնում է բնության ամեն մի յերեվույթի համար: Նա չի կարողանաւ հասկանալ քամու, ամպրոպի, հեղեղի պատճառը: Նա չի կարողանում ներգործել բնության ուժերի վրա: Այս նա ի վիճակի չե կանգնեցնել ամպրոպը, չուր տալ զետի հոսանքը: Այստեղից ել բղասում է ինչվոր խորհրդավոր ուժերի, հոգիների կամ վոգիների հավատը, վորոնք իշխում են բնության վրա:

ՀՈԳՈՒ ՀԱՎԱՏԻՑ Ի՞ՆՉՊԵՍ Ե ԾՆԿՈՒՄ ԿՐՈՆԸ

Այսպիսով, գեռ խոր հնության մեջ հրապարակ է գալիս հոգու գոյության հավատը: Մարդու կենացնի ժամանակ հոգին իբր թե կարող է ժամանակավորապես բաժանվել մարմնից: այդ բանը պատճում է քնի մեջ, ուշաթափության մեջ: Նա ինչ վոր մի տեղ

թափառում է, հետո վերադառնում է: Սեանելուց հետո քայլայի վում է միայն ապակենացու մարմինը: Իսկ հոգին իբրթի անմահ է մնում: Նա ոգտվում է հարգանջով, մահավանդ յեթե դա այն մարդու հոգին է, վորը կենդանության ժամանակ ոչչի ընկնող դիր եր խաղում:

Նախնական հասարակության մեջ ժամանակի ընթացքում սկզբնական հավասարությունը չքանում է: Նրա մեջ չերտավորում է առաջ զալիս: Զակնվում են պատերազմի, վորսորդության, տքնական դորձերի կազմակերպիչները, զեկավարները: Դրանք մեծ ժամանակ ծերեր են, մեծ փորձառություն ունեցող մարդիկ: Նըրանց հնագաղում են կենդանության ժամանակ, նրանց հարցում են ժեննելուց հետո: Այդ ավաղների հոգիները կամ վոգիները մարդուն մի տեսակ հզոր երտկներ են թվում: Նրանցից և կախված նրա բարեկեցությունը: Նա աղոթում է նախնիքների վոգիներին հաւազող փորձորդության մասին, հիմանդրությունից աղասավելու մասին: Հետո հրապարակ են զալիս առանձին միջնորդներ վագիների և մարդկանց միջի—քրծեր (միենույնը, ինչ վոր մեր ժամանակում տերտերները): Նրանք նախնիքների վոգիներին զուհեր են բերում, վորտիսդի նրանց զութը շարժեն:

Նախնիքների վոգիները—հենց զրանք են առաջին աստվածները: Այսպես հոգու պատկերացումից ծնվում է կրոնը:

ԿՐՈՆՆ Ի՞ՆՉՊԵՍ Ե ՀՈԴՍ ՔԱՇՅԱԿ ՀՈԴՈՒ ՀԱՄԱՐ

Իսկ ինչո՞ւ հոգու հավատը, վոր ապանյակ հալար տարիներով առաջ և ծագել վորպես նախնական մարդու անողնականության և տղիտության արդյունք, մինչև այժմ ևլ պահպանվում է: Նա ո՞ւմն է պիտք, նա ո՞ւմն է ձեռնուու: Փորձնենք քննել այդ բանը:

Կրոնն ուսուցանում է, թե գլխավոր բանը մարզու մեջ՝ հոգին և Մարմինը—մի ինչ վոր ցածր, արհամարհելի բան և Մարմինի համար վաշ մի խնամք չի պահանջվում: Դրան հակառակ, քանի ավելի սաստիկ և տանջվում մարմինը, քանի ամիելի կեղտու ու խոցելով և պատված նա, հոգին ամելի շուտ և զնում յերկների արքայությունը—թաղավորությունը:

Դրա փոխարեն հոգու մասին արդեն շատ հոգս և քաշում կրոնը: Համբերիք և հնագաղնդմիքը, տում են միաձայն քրիստոնեական տերտերները, չրէյական ուարքիները, մուսուլմանական մոլլաները: Դրա փոխարեն անդրդերեղմանական աշխարհում հոգիդ հավիտնապե՞ս կուրախանա: Համբերությամբ տար զրկանքը,

ննջումը և շահագործությունը: Ցեթե աջ յերեսդ ապտակեն, ձախն ել դեմ արա: Զարին հակառակ մի կեցիր ուժով: Բոլոր յերանգի յեկեղեցականները միշտ ուսուցանում եյին ներել դասակարգային թշնամուն, նրանք կոչ եյին անում դյուղացիներին համբերատարությամբ տանել կարգածատերերի բանությունները, բանվորներին—խոնարհությամբ կրել կապիտալիստների շահագործումը:

Լավ, իսկ յեթի համբերությունը պատովի՞ յեթի դյուղացին ու բանվորը ըմբոստանան պարոնների և տերերի գե՞մ: Այդ ժամանակ՝ ըստ կրօնի ուսմունքի, նրան այն աշխարհում հավիտնական տանջանքներ են սպասում: Նա չի ազատվի հրավառ գեհենից: Նրա հոգին պետք է յեփի վառվող ձյութի մեջ և կուչ գա շիկացած թավայում, հավատացնում են տերտերները: Յեկեղեցական պլակատների վրա նույնիսկ պատկերացված է, թե ինչպես սատանաները մեղավորներին կողից են կախում: Աւրեմն, հոգին կողե՞ր ել ունի: Մեղավորները տանջվում են դժոխում ատամների կըբճառումիվ: Նշանակում է, անմարմին հոգին ատամնեմ՞ը ել ունի: Ահա՛ քեզ պատմություն: Մի փոքրիկ անհարմարություն և ստացվում: Բայց եյականն այդ չե:

ԴՓՈԽՔԻ ՅԵՎ ԳՐԱԽԾԻ ՄԱՍԻՆ, ԱՆԴՐԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Վո՞րտեղից են վերցրել ընդհանրապիս գժոխքի և զրախտի պատկերացումը: Խոր հության մեջ, յերբ հրապարակ յեկավ հոգու գոյության հավատը, վո՞չ դժոխքի, վո՞չ դրախտի մասին դեռևս վոչ մի հակացողություն չկար: Ինչ շափով վոր բոլոր մարդիկ հավասար են, այդ չափով ել նրանց հոգիներն այն աշխարհում ապրում են միակերպ պայմաններում: Ավելի ուշ, յերբ սկսվում է անհավասարությունը, բաժանումը դասակարգերի, մարդիկ պատկերացնում են իրենց, թե գերեզմանի այն կողմումն ել պետք և սպիտակ և սև գոսկորներ լինեն: Նշանավոր հոգիները յերանական կյանք են վարում դրախտում: Հասարակ ժողովրդի սառը հոգիները տանջվում են դժոխքում:

Հավատացյալները անդրդերեղմանական կյանքը պատկերացնում են իրենց յերկրագոր կյանքի պատկերով: Հին Յեգիպտասոսում հարուստ հանգուցյալների գամբարաններում տանյակ և նույնիսկ հարյուրավոր ֆիգուրաներ եյին դրվում: Դրանք իբր թե այն սորուների վոգիներն եյին, վորոնք այն աշխարհում պետք է ծառայելին իրենց տիրոջը: Յեգիպտական գամբարանների նկարները պատկերացնում են, թե ինչպես հարստի հոգին ուղեվորվում է

այն աշխարհը չքեղ կարդուիլած կառքով՝ չքախմբով շրջապատաված : Իսկ Հենց այլտեղում ել աղքատի հոդին քաշեցաւ գնում և վուգով—այլպես ել կհասի : Եեղալտական թագավորների, իշխանազուների և քրմերի մարմինները մեռնելուց հետո վրասում եյին, այսինքն՝ լցնում եյին ձյութե վորոշ տեսակներով, վորոնք նախագաշտպահնում են փսությունից (այլպիսի զմռաված դիակեներ, վորոնք շատ զարերով են պահպանվում, կոչվում են մումիաներ) : Այդ բանն արգում եր նրա համար, վորպեսզի հոգին կարողանար մարմնի մէջը վերադառնալ ահեղ զատաստանից հետո : Սակայն չքավորի մարմինը չեր զմռավում, —այդ շատ թանգ պրոցեդուրա յեր : Իսկ ի՞նչ կապատահի չքավորի հոգու հետ : Նա ի՞նչպե՞ս կունի իր մարմինը : Ինչ արած, թերես մէկ կերպ հանդիպի : Ամեն մեկի համար զմռուսների պաշար չե՞ս պատրաստի :

Յեկեղեցու սպասավորները կեղծամորաբար հավատացնում են, վոր կրոնը հավասարապես հոգս և քաշում բոլոր հավատացյաների մասին : Բայց այդ սուտ և Մենք տեսանք, թե ինչպես եր սպասարկում յեղապատական կրօնը իշխանություն ունեցալների հոգիներին : Այլպիսի որբնակներ շատ կարելի յէ բերել թե՛ հնում և թե՛ մեր ժամանակ : Ճիշնք, թե ինչպիսի հոգեհանգիստներ եյին պատվիրվում, ինչպիսի նվիրաբերություններ եյին արլում յեկեղեցիներին և վանքերին, ինչպիսի հաստ մոմեր եյին վառվում վորեկ հարուստ վաճառականի կամ կարլածատիրոջ հոգու հանգըստության համար : Այդ ամենը—դրամական զոհաբերություններ են, վորոնցով իրը թե դրախտական յերանություն և գնումն նրա համար : Իսկ չքալորի համար մի լղարիկ մոմն ել բավական կլինի : Թող նրա հոդին չվշտանա՞ :

ՈՒՄՆ Ե ԶԵԽՆՏՈՒ ՀՈԳՈՒ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԸ

Կրոնը ամեն ժամանակ և ամեն տեղ միայն շահաղործողներին և ծառայել : Դրա մէջն ե նրա դասակարգային եյությունը : Վերցնենք մեր յերկրում ամենատարածված կրօնը—քրիստոնեյությունը : Քրիստոնեյական կրօնը միշտ նվիրագործել և ճնշումն ու շահագործությունը : Նա ողնում եր կալվածատերերին և կառլատավաներին ստրկության մէջ պահելու աշխատավոր մասսաներին : Այդ նապատակով նա վախեցնում եր մասսաներին դժոխային տանջանքներով : Յեկեղեցին հատուկ նղովք— անաթեմա (բանադրանք)՝ հնարեց հեղափոխական չարժման դեմ պայքարելու համար : Անաթեմայի եյին յենթարկվում և՛ նաղինը, և Պուգաչու

վը և մի ամբողջ շարք հեղափոխականներ : Անաթեմայի յենթարկեց Տիֆան պատրիարքը նաև խորհրդային իշխանությանը :

Այդ բանը պետք եր սպասել : Այս յեկեղեցականները մարմին եյին ունելուր զասակարգերի մարմնից : Կալվածատերերն ու կապիտալիստները, ցարի գլխավորությամբ, փողեր եյին տալիս հոգեվորականության համար, վանքերի համար, յեկեղեցիների— կրոնական հաշիվի այդ ոջախների— շինարարության համար : Իսկ յեկեղեցական միաբանությունը դրա համար ել պաշտպանում եր չահագործողներին, նրանց իշխանությունը առածուց ուղարկված եր հայտաշարում և նրանց դեմը պայքարելու համար հրավառ գեհենով եր սպասնում : Զնոքը ձեռքով և լվացվում : Զարմանալի չե, վոր բանվորակյուղացիական իշխանությունը, վոր վոչնչացրեց կալվածատերերի տիրապետությունը, ուրու չեկավ Փարաչավոր մակարուցներին և անաթեմայի տակ ընկալ :

Աշխատավորներին ստրկացնելու գործիքներից մեկը հոգու հավատն եր : Արդե՛ արդյոք նեղաւթյուն քաշել յերկրավորի համար, վերակառուցել կյանքը—ասում եյին տերուերները : Զե՞ վոր յերկրավոր ամեն ինչ—ապականացու յե : Դաշտարենք հոգս անել յերկրավոր բարիքների մասին : Ավելի լավ և մտածենք անմահ հոգու փրկության մասին : Ի՞նչ մի գժեախտություն ե, վոր ստիպված լինենք համբերել : Աստված համբերում եր, մեզ ել հրամայեց համբերել :

Այսպիս տերուեկան առաջարկները հոգու մասին ոգնում են ինչ շահագործողներին՝ հնապանդության մեջ պահելու մասսաներին :

ՀԵՔԻԱԹԸ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ—ԽՈՉԾՆԴՈՒՏ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պրոլետարիստը վճռապես ժխտում և հոգու անմահության, անգրդեկազմանական կյանքի մասին յեղած անհեթեթ հեքաթթերը : Նա զիտե, վոր վոչ մի գերբնական, այսինքն՝ բնությունից դուրս, բնություն գոյություն չունի : Հոգու հավատը առաջ և յեկեղել նախնական մարզու անզորությամբ և անզնականությամբ : Նա գարերով պահպանվում է աշխատավոր մասսաների մեջ չնորդչիլ նրանց անողնականության՝ թե բնության ուժերի առաջ, թե՛ շահագործողների ձնչման առաջ : Համախմբված և կազմակերպված եր դասակարգային պայքարում, վատահ իր վերջնական հաղթանակում, պրոլետարիատը հոգու մասին յեղած առաջարկների կա-

բիել չի զգում : Նա գիտակցաքար պայքարում և յերկրավոր յերջանիկ կյանքի համար, գիտենալով, վոր յերկրավոր կյանքից զատուրիչ կյանք չկա : Հիշենք իլլիչի ավանդը :

«Ժամանակակից գիտակից բանվորը արհամարհանքով զեն և շպրտում իրենից կրոնական նախապաշարմունքները և յերկինքը տերտերների և բուրժուական կեղծ բարեպաշտների անօրինության և թողնում, իրեն համար լավագույն կյանք նվաճելով այստեղ, յերկրի վրա» :

Իսկ ի՞նչ լավագույն կյանքի մասին և խռում իլլիչը : Իհարկե, կոմունիստական հասարակակարգի մասին, յերբ դաստիարակի չեն լինի, յերբ ամենքը հավասար կլինեն, յերջանիկ և ազատ : Դժվարին և ճանապարհը դեպի նա : Նա հոկայական խոչընդուների միջով և անցնում : Մենք մեր բոլոր ուժերի լարումով կհաղթահարենք այդ խոչընդուները : Ամբողջ յերկիրը սոցիալիստական շինարարությամբ և բոնված : Ամեն մի որ մեզ համար նորանոր նվաճումներ և բերում : Մենք հաջողությամբ ենք կատարում հոգակը չորս տարում :

Ամենակարեվոր խոչընդուներից մեկը մեր ճանապարհին՝ կրոնական հաշիչն ե : Նրա ոգնությամբ բանվոր դաստիարակի թշնամիները մշտչապատում են աշխատավորների գիտակցությունը : Քիչ չեն մեր թշնամիները նաև այժմ, հեղափոխության 14-րդ տարում ; Կուլակային տարրերը իրենց դամքաշների՝ տերտերների և աղանդավորների հետ միասին ձգտում են վերադարձնել հին կարգերը : Նրանք իրենց մեղրահոս զրույցներով հոգու մասին և աշխարհի վախճանի գուշակություններով աշխատում են հեղուստահել աշխատավորներին լավագույն կյանքի համար պայքար մզելուց : Ոգովելով մեր չինարարության դժվարություններից, նրանք կրոնի ծածկույթի տակ աղիտացիա յեն տանում խորհրդացին իշխանության դեմ :

Ճիշտ ե, մեր կենցազում մինչև այժմ ել չատ խառնաշխություններ, շատ պակասություններ, շատ նեղ տեղեր կան : Իսկ ինչո՞վ կհաղթահարենք մենք նրանց : Իհարկե, վոչ թե հոգեփորկիչ զրույցներով և աղոթքներով, վոչ թե ներելով դաստիարակյին թշնամուն, այլ՝ ընդհակառակը, նրա դեմ անողոք պայքար մղելով : Մենք պետք ե մերկացնենք յեկեղեցականի դիմակով սքոված դաստիարակյին թշնամուն : Զոգետք ե հույս դնել անդրգերեզմանական կյանքի վրա, չպետք ե ձեռքերը ծալել աշխարհի վախճանին սոլտուելով, ինչպես վոր առաջարկում են տերտերներն ու

աղանդավորը իները, այլ ոչիուք ե կրիստոնէատիկել յեռանցը սոցիալիզմի համար պարքերնելիստահամար մեր անելիքը :

Օեվ տյուպես, առաջ սոցիալիստական շինարարության զարդար, արդիքինալլանի համար, հնդամյակը չորս տարում կատարելու համար : Թող կարչեն հեքիաթները հոգու հեռավոր անցյալը մասին, վորը խանդարիչ և հանգիստանում նոր համակարգույն կյանքի կառուցմանը :

ԲՈՎԱՆԴԱԿԱՌԻԹՅՈՒՆ

Հավատացյալներն ի՞նչ են մտածում հոգու մասին	3
Ի՞նչպիսի կախումն ունի մեր հոգին մարմնից	3
Ինչով և կառավարվում մեր մարմինը	5
Կենարոնական նյարդային համակարգությունը	7
Յերբ ընկերների մեջ համաձայնություն չկա , նրանց դործը կարգի չի դա	7
Աղավնիներն ու չներն ինչպե՞ս են սպնում լուծելու	8
Թե հոգի կա՞ արդյոք	9
Ի՞նչ կազ կա մեր գիտակցության և զմիսի ուղեղի միջեվ	9
Կենդանիների և մարդու բանականությունը	10
Հյութերն ի՞նչպես են կառավարում մեր մարմինը	11
Ինչպե՞ս և ազդում մարդու կերպարանքի վրա սեռական գեղձը	12
Գիտնականներն ինչպե՞ս են «նոր հոգիներ ներշնչում»	13
Առանձին մասերի կյանքը մարմնի մեջնելուց հետո	14
Գիտության իշխանությունը կենդանի բնության վրա	16
Մարդիկ ինչպե՞ս սկսեցին հավատալ հոգու գոյաւթյանը	17
Հոգու հավատից ինչպե՞ս և ծնվում կրոնք	19
Կրոնն ինչպե՞ս և հոգս քաշում հոգու մասին	20
Դժոխքի և դրախտի մասին , անդրգերեղմանական կյանքի մասին	21
Ո՞ւմն և ձեռնուու հոգու գոյության հավատը	22
Հեքիաթը հոգու մասին—խոչընդու և սոցիալիստական շինարարություն համար	23



ՀՀ Ազգային գրադարան



NL0159152

ԳԻՒԾ 25 ԿՈՊ. (1^½, Ա.)



Խ. ԲԵՐԿՈՎԱ

СУЩЕСТВУЕТ-ЛИ ДУША?

Госиздат ССР Армении
Երևан—1981